

ՅՈՎԿ. ԹՈՒՍԱՆԵԱՆ

ԲԱՐԵԿԵՆՆԴԱՆԸ





Ժամանակին կար մարդ մը ու կին մը:
Այս մարդն ու կինը գիրար չէին հաւնէր:
Մարդը կնոջ կ'ըսէր չիմար, կինն ալ՝ մարդուն: Ու միշտ կը կռուէին իրարու հետ:



Օր մըն ալ, մարդը քանի մը փութ իղ ու բրինձ կ'առնէ, կու տայ մշակին շալակը, կը տանի տուն:

Կինը կը բարկանայ.

— Երբ յիմար ես կ'ըսեմ, չես հաւատար, այսքան իղն ու բրինձը մէկ անգամէն ինչո՞ւ համար բերած ես, հօրդ համար հոգեճա՞շ պիտի տաս, թէ տղոյդ հարսանիքը պիտի սարքես:

— Ի՞նչ հոգեճաշ, ի՞նչ հարսանիք, այ կնի՛կ, ի՞նչ կը խօսիս, տար պահէ՛, բարեկենդանի համար է:

Կինը կը հանգստանայ, կը տանի պահելու:



Կ'անցնի որոշ ժամանակ, այս կինը կը սպասէ ու կը սպասէ, բայց բարեկենդանը չի գար: Օր մըն ալ, տան սեմին նստած պահուն, կը տեսնէ մարդ մը, որ փողոցէն աճապարանքով կ'անցնի: Կինը ձեռքը կը դնէ ճակատին ու ձայն կու տայ.

— Ե'դբայր, ե'դբայր, վայրկեան մը կեցի'ր:

Մարդը կը կենայ:

Ե'դբայր, բարեկենդանը դուն չե'ս:

Անցորդը կը գկատէ, որ այս կնոջ խելքը պակաս է, կը մտածէ. «Այո՛ ըսեմ, տեսնեմ ինչ պիտի պատահի»:

— Այո՛, ե'ս եմ բարեկենդանը, սիրելի՛ քոյրիկ, ի՞նչ ունիս ըսելիք:




— Ես այն պիտի ըսեի, որ մենք քու ծառայ չենք, որ պահենք քու իղն ու բրինձը: Ինչքան որ պահեցինք ճերիք չէ՞... չե՞ս ամչնար... ինչո՞ւ չես գար տանելու քու ապրանքը:


— Ինչո՞ւ կը նեղուիս, սիրելի՛ քոչրիկ, ես այլ եկած եմ ճի՛շդ ասոր համար, ձեր տունը կը փնտռեի ու չէի գտներ:

— Ուրեմն ա՛ն էի տա՛ր:



Այս մարդը ներս կը մտնէ, կը շարկէ իղն ու քրիւնձը ու կը մեկնի դէպի իրենց գիւղը:





Ամուսինը տուն կու գայ, կինը կ'ըսէ.

— Լսէ՛, այդ բարեկենդանը եկաւ, խայտառակեցի զինք, տարաւ իր ապրանքը:

— Ի՞նչ բարեկենդան... ի՞նչ ապրանք...

— Ա՛յդ իղն ու բրինձը...: Յանկարծ տեսայ որ վերի կողմէն կու գայ, մեր տունը կը փնտռէ. կանչեցի, լաւ մը խայտառակեցի, շաւակը տուի ապրանքը, տարաւ:

— Վա՛յ անխելք, վա՛յ, երբ կ'ըսեմ յիմար ես՝ իսկապէս յիմար ես եղեր...:

Ո՞ր կողմը գնաց:



— Ահա՛ այդ կողմը:

Այս մարդը ձի կը հեծնէ, կ'իյնայ բարեկեղանի ետեւէն: Ծանապարհին բարեկեղանը ետ կը նայի, կը տեսնէ որ ձիատր մը կու գայ: Յանկարծ կ'անդրադառնայ, որ այս ձիատրը այդ կնոջ ամուսինը պէտք է ըլլայ:



Մարդը կու գայ եւ կը հասնի իրեն:

— Բարի օր, եղբայր:

— Աստուծոյ բարին:

— Արդեօք այս ճամբէն մարդ մը չանցա՞ւ:

— Անցաւ:

— Ի՞նչ ունէր շալակին:

— Ինչ ու բրինձ:

— Հա՛, ճիշդ ան է ուզածս: Ինչքա՞ն ժամանակ եղաւ:

— Բաւական ժամանակ եղաւ:

— Եթէ ձիով երթամ՝ կը հասնի՞մ:

— Ինչպէ՞ս պիտի հասնիս, դուն՝ ձիով, ան՝ ոտքով: Մի՞նչեւ քու ձիդ չորս ոտքը փոխէ՛ մէ՛կ, երկո՛ւ, երե՛ք, չո՛րս, ան երկու ոտքով՝ մէ՛կ-երկո՛ւ, մէ՛կ-երկո՛ւ, մէ՛կ-երկո՛ւ, շուտ-շուտ կ'երթայ, քեզ կ'անցնի:



— Ուրեմն ի՞նչ ընեն:

— Ի՞նչ պիտի ընես, եթե կ'ուզես, ձեռք ինձի ձգե, իրեն պես դուն ալ ոտքով վազե, գուցե հասնիս:

— Օ՛հ, այդ լաւ ըսիր:

— Ոտքը գետին կը դնէ, ձեռք կը ձգե անոր ու ոտքով ճանապարհ կ'իջնայ:

Մարդը հագի կը հեռանայ՝ բարեկեանքներ իղն ու բրինձը կը դնէ ձիուն վրայ, ճամբան կը փոխէ ու կը բշէ:

Մարդը ոտքով կ'երթայ ու կ'երթայ, բայց կը տեսնէ թէ չի հասնիր, ետ կը դառնայ: Ետ կը դառնայ, կը տեսնէ՝ ձիւն ալ չկայ: Կու գայ տուն: Դարձեալ այր ու կին կը սկսին կռուիլ, մարդը իղին ու բրինձին համար, կինը՝ ձիուն:



Մինչեւ այսօր այդ մարդն ու կինը կը կռուին. մարդը կ՛ընչ կ'ըսէ յիմար, կ'ինն ալ՝
մարդուն, իսկ բարեկեանդանը կը լսէ ու կը ծիծաղի: